«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 22-01/02

ք. Երևան,Արշակունյաց 5, 417 սենյակ 30.08.2018թ. ժամը 16:00

«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 08.08.2018թ-ին ստացված, քաղաքացի Մանուկ Աֆրիկյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Հիքսոս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Սահակյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Օգոստոսի 23-ին ժամը 15.00-ին հրավիրված և 30.08.2018թ- 16.00-ին հետաձգված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
«Հիքսոս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Սահակյանը
Դիմումատու՝ Մանուկ Աֆրիկյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, որ 14.08.2018թ-ին նշանակվել էր նիստ, որը հետաձգվել էր, քանի որ «Հիքսոս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Սահակյանը ծանուցվել էր նիստի մասին, պատասխան էր ներկայացրել, սակայն նիստին չէր ներկայացել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հիքսոս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Սահակյանի բացակայության պայմաններում մի շարք հարցեր մնում էին չպարզաբանված, նիստը հետաձգվել էր:
24.08.2018թ-ին «Հիքսոս» ՍՊԸ-ի մասնակից, դիմումատու Մանուկ Աֆրիկյանի կողմից գրություն է ներկայացվել «ՍԳԿԿ» ԻԿԿ, որով դիմումատուն հրաժարվել է ներկայացված պահանջից և խնդրել իր բողոքը թողնել առանց քննության:
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը արտահայտեց այն կարծիքը, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ դիմումատուն հրաժարվել է պահանջից:
Կարգապահական հանձնաժողովի անդամները համաձայնեցին և քվեարկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 08.08.2018թ-ին ստացված, «Հիքսոս» ՍՊԸ-ի մասնակից, դիմումատու Մանուկ Աֆրիկյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Հիքսոս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Սահակյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարճել, քանի որ դիմումատուն հրաժարվել է ներկայացված պահանջից և խնդրել իր բողոքը թողնել առանց քննության:
2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հ. Գևորգյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյանը